ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 05 - 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «03» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «:Բուն» գիտամշակութային հիմնադրամը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Գեմաֆին Գասպարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 2443-Ա/2 հրամանով հաստատված «Երիտասարդների համար երիտասարդական աշխատանքի և կամավորության խթանում» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 23-ի նիստի 03 արձանագրությունը՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման (տող՝ «Երիտասարդների համար երիտասարդական աշխատանքի և կամավորության խթանում» շրջանակներում «Կամավորը» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 4800,0 հազար (չորս միլիոն ութ հարյուր հազար) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն

իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի

հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և

կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ ապրիլ ամսին, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4.Սույն պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող են հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, բայց ոչ ուշ, քան դեկտեմբերի 10-ը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3.Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմի

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ
և սպորտի նախարարություն	Ք. Երևան, Բաշինջաղյան 133
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1930049723220100, ՀՎՀՀ 02623069
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	boon@boon.am
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Հ. Հակոբյան	**Գ. Գասպարյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«25» «03» 2024 թ.

N ԵԴ-05- 2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	«Կամավորը» ֆիլմաշարի պատրաստում	Մշակված սցենարների հիման վրա ֆիլմերի պատրաստում	-Հերոսների ընտրություն -Ֆիլմերի սցենարի պատրաստում -Ֆիլմերի նկարահանում և հետնկարահանում -Ֆիլմաշարի հանրայնացում	-8 մասից բաղկացած ֆիլմաշար, յուրաքանչյուրը՝ 10-12 րոպե տևողությամբ -Ֆիլմերի հեռարձակում ԲունTV հանրային հեռարձակողի կողմից աշնանային եթերաշրջանի մեկնարկից՝ շաբաթական մեկ անգամ պարբերականությամբ (եթերաշրջանի մեկնարկ՝ 2024 թ. սեպտեմբերի առաջին կես): Յուրաքանչյուր ֆիլմը, կրկնությունները ներառյալ, կհեռարձակվի առնվազն չորս անգամ: -Յուրաքանչյուր հաղորդման հասանելիություն առնվազն 30,000 համացանցի օգտատիրոջ	30/11/2024	10.12.2024	4,000.0
2	Ծրագրի ամփոփում և հաշվետվություն	Ծրագրի ամփոփում՝ ըստ սահմանված ցուցանիշների	Վերջնական ֆինանսական և նարատիվ հաշվետվությունների պատրաստում	ԿԳՄՄՆ կողմից ընդունված և հաստատված հաշվետվություններ	10.12.2024	10.12.2024	0
	Ընդամենը՝						**4,000.0**
	ԱԱՀ՝						**800.0**
	Ամբողջը՝						**4800.0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ
Ք. Երևան, Բաշինջաղյան 133
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930049723220100, ՀՎՀՀ 02623069
boon@boon.am
Տնօրեն՝
Գ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-05- 2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Կամավորը» ծրագրի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Կազմակերպչական ծառայություններ**				
1.1	Նկարահանման աշխատանքների կազմակերպման ծառայություններ (8 տեսանյութ x 100.0 հազ. դրամ)	հատ	1	800.0	800.0
1.2	Տեսանյութերի նկարահանման ծառայություններ (8 տեսանյութ x 120.0 հազ. դրամ)	հատ	1	960.0	960.0
1.3	Տեսանյութերի հետնկարահանման ծառայություններ՝ (8 հատ x 120.0 հազ. դրամ)	հատ	1	960.0	960.0
1.4	Տեսանյութերի դիզայներական և գրաֆիկական ծառայություններ՝ (8 տեսանյութ x 60.0 հազ. դրամ)	հատ	1	480.0	480.0
1.5	Տեսանյութերի տարածման ծառայություններ առցանց հարթակներում՝ (8 տեսանյութ x 100.0 հազ. դրամ)	հատ	1	800.0	800.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**4000.0**
	ԱԱՀ**				**800.0**
	ԱՄԲՈՂՋԸ				**4800.0**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ
ք.Երևան, Բաշինջաղյան 133
boon@boon.am
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930049723220100, ՀՎՀՀ 02623069
Տնօրեն _____ Գ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-05 - 2024 պայմանագրի

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ»
դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ
Հապավումը (եթե առկա է)	
Ծրագրի անվանումը	«Կամավորը»
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)[1]	«01» «Ապրիլ» 2024թ. - «30» «Նոյեմբեր» 2024թ.
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք, ԱՊՀ երկիր (երկրներ)	Երևան, ՀՀ
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Գեմաֆին Գասպարյան gemafin.gasparyan@boon.am +374 77 110027
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Նանե Մինասյան nane.minasyan@boon.am +374 55 740653
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ)	Բաշինջաղյան 133, Երևան 0031, ՀՀ boon@boon.am +374 33 110633
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)[2]	4,800,000

[1] Ծրագրի մեկնարկը՝ 2024 թվականի բյուջետային տարվա երկրորդ եռամսյակից: Ծրագրի իրականացման և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակը:
[2] Ծրագրի բյուջեով արգելվում են կապիտալ բնույթի ծախսերը:

Համառոտագիր

Առաջարկվող նախագծի նպատակն է նպաստել երիտասարդության շրջանում կամավորության մշակույթի ձևավորմանը և խթանել պատասխանատվության զգացումը դոկումենտալ ֆիլմաշարի ստեղծման և հեռարձակման միջոցով: Դոկումենտալ ֆիլմերի շարքն ուղղված կլինի կամավորական և երիտասարդական գործունեության խթանմանը և կոգեշնչի այս տեսակի գործունեությամբ զբաղվելը: Շարքը կցուցադրի տարբեր ազդեցիկ կամավորական նախաձեռնություններ և համայնքային ներգրավվածության նախագծեր՝ խրախուսելով երիտասարդներին ակտիվ մասնակցություն ունենալ դրական սոցիալական փոփոխությունների բերող նախաձեռնություններում: Գրավիչ պատմությունների և իրական կյանքի օրինակների միջոցով հեռուստաշարքը նպատակ ունի դրդել երիտասարդներին իրենց ներդրումն ունենալ իրենց համայնքներում և խթանել պատասխանատվության զգացումը: Նախատեսում ենք ներկայացնել ութ տարբեր երիտասարդների պատմությունները և վերջիններիս կողմից իրականացված նախագծերը ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում:

Ծրագրի նկարագրություն

Առաջարկվող նախագիծը բաղկացած է լինելու 8 հաղորդումներից՝ նկարահանված հեռուստատեսային վավերագրության ժանրում, որոնցից յուրաքանչյուրը կենտրոնացած կլինի որևէ կամավորական կամ երիտասարդական գործունեության լուսաբանման վրա: Որպես նմանատիպ օրինակ ներկայացնում ենք «:Բուն» հիմնադրամի կողմից նկարահանված «Ուսուցիչը» նախագիծը, որը հասանելի է այստեղ: Յուրաքանչյուր ֆիլմ կներառի այս ոլորտում հաջողության հասած ու դրական փոփոխություններ խթանած երիտասարդ կամավորների անհատական պատմությունները՝ ինտերակտիվ հատվածներով: Ֆիլմերում տեղ կգտնեն իրականացված նախագծերից և միջոցառումներից կադրեր, ռեժիսորական լուծումներից և անհրաժեշտությունից ելնելով կնկարահանվեն նաև համայնքի բնակիչները և նախագծերի շահառուները՝ ֆիլմաշարն ավելի իրական դարձնելու համար: Հաղորդաշարի նպատակն է ցուցադրել կամավորության և համայնքային միջոցառումներին մասնակցության դրական ազդեցությունը՝ ոգեշնչելով դիտողներին ակտիվ դեր ստանձնել իրենց համայնքներում:

Այսօրվա հասարակությունում երիտասարդների շրջանում ակտիվ համայնքային մասնակցության և կամավորության դրսևորումների զարգացման անհրաժեշտություն կա: Ծրագիրն անդրադառնում է իրազեկվածության և մոտիվացիայի խնդիրներին՝ ներկայացնելով գրավիչ պատմություններ, որոնք ընդգծում են կամավորության, համայնքի ներգրավվածության և երիտասարդական տարբեր միջոցառումներին մասնակցության առավելություններն ու շահեկան կողմերը:

Ժամանակակից աշխարհում՝ ինդիվիդուալիզմի և սոցիալական մեկուսացման պայմաններում, երիտասարդներին ոգեշնչելը իրենց համայնքներում ակտիվ դերակատարում ունենալու հարցում կարևոր խնդիր է: Հեռուստանախագիծը նպատակ ունի լրացնելու այս բացը՝ ցուցադրելով կամավորական գործունեության և նախաձեռնողականության փոխակերպող ուժը: Ներկայացնելով համապատասխան օրինակներ և հաջողության պատմություններ՝ նախագիծը սոցիալական նախաձեռնություններին մասնակցելու դրական օրինակ կծառայի երիտասարդների համար: Համայնքներում պոտենցիալ դրական փոփոխություններ բերելուց բացի, կամավորական աշխատանքը նպաստում է անմիջապես երիտասարդների տարատեսակ հմտությունների զարգացմանը, գործնական փորձի ձեռքբերմանը և օժանդակում է հետագա մասնագիտական գործունեությանը:

Կազմակերպության փորձառությունը

«:Բուն» գիտամշակութային հիմնադրամը (www.boon.am) հիմնադրվել է 2013թ.՝ որպես Հայաստանում առաջին անկախ նորարարական գիտակրթական բազմահարթակ մեդիա՝ նպատակ ունենալով ստեղծել այլընտրանքային, հիմնական հոսանքից դուրս, որակյալ բովանդակություն գիտության և արվեստի ամենատարբեր ճյուղերում: «:Բուն» հիմնադրամի ներքո գործող Բուն TV հանրային հեռուստաալիքը Հայաստանում առաջին ոչ կոմերցիոն զանգվածային մեդիան է՝ ուղղված ինքնակրթության դերի ամրապնդմանը և գիտելիքի՝ որպես հանրային արժեք հռչակմանը: Մեր առաքելությունն է նպաստել գիտությունը և արվեստը արժևորող հասարակության ձևավորմանը: Ըստ այդմ՝ մեր նպատակների թվում են.

- Օժանդակել Հայաստանում գիտական մտքի շրջանառությանը,
- Գիտությամբ և արվեստով զբաղվող մարդկանց դարձնել ճանաչելի,
- Խրախուսել ռացիոնալ և կառուցողական երկխոսության մշակույթի ձևավորմանը:
- Ստեղծել հարթակներ քաղաքացիական հասարակության դերակատարների համար՝ ներկայացնելու իրենց ժողովրդավարական օրակարգերը;
- Նպաստել քննադատական մտածողության զարգացմանը:

Բուն մեդիայի առանձնահատկությունն այն է, որ այն չի լուսաբանում առօրյա քաղաքական իրադարձություններ, փոխարենը՝ անդրադառնում է շրջանառվող նարատիվներին և դիսկուրսներին վերլուծական դիտանկյունից՝ ստեղծելով արդիականությունը չկորցնող բովանդակություն: Բունը միավորում է մեր հասարակության ստեղծագործ առաջահայաց անհատներին խթանելու կրթությունը, ժողովրդավարական արժեքները, ազատ արտահայտումը և բազմազանությունը՝ փաստերի վրա հիմնված ողջամիտ երկխոսությունների հարթակներ ստեղծելով: Մինչ այժմ ավելի քան 800 հետազոտողներ, գիտնականներ և արվեստագետներ «Բունի» հարթակների միջոցով բարձրաձայնել են հանրությանը հուզող հարցեր, ներկայացրել իրենց ակադեմիական հետազոտությունները և ներկայացրել առցանց դասախոսություններ բնական, հասարակական գիտությունների և արվեստի մի շարք դիսցիպլիններում: «:Բուն» հինադրամը մշակել, նկարահանել և հանրայնացրել է ավելի քան 4000 տարբեր ձևաչափերի հեռուստահաղորդումներ, իրականացրել է բազմաթիվ կրթական և մշակութային նախագծեր: Այս ամենը հնարավոր է դարձել մի շարք տեղական և արտասահմանյան կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության, ինչպես նաև հիմնադրամի առաքելության շուրջ համախմբված անհատների կամավորական ջանքերի շնորհիվ: Հայաստանի համալսարանների կողմից Բունի նյութերի ոչ պաշտոնապես ներառումը ուսումնական ծրագրերում, ինչպես նաև մեր աճող լսարանը հիմնադրամի հաջող աշխատանքի հիմնավոր վկայություն են: Բացի այլընտրանքային բովանդակություն ստեղծելուց, հիմնադրամի գործունեությունը աշխատանք է ապահովում Հայաստանում գիտության և արվեստի ոլորտում գործող մասնագետների համար այսպիսով խրախուսելով թե՛ նրանց մեծ ներդրումը մեր ծրագրում և թե՛ Հայաստանում ապրելու և աշխատելու նրանց որոշումը:

Մենք օգտագործում ենք բոլոր մեդիա գործիքները Բուն բովանդակությունը տարածելու համար՝ հեռուստատեսություն, ռադիո, կայք և սոցիալական մեդիա: Մենք ընտրել ենք այս մեթոդը հասարակության հնարավորինս լայն շերտեր ներգրավելու համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր թիրախային լսարանի նախասիրությունները: 2022թ. հոկտեմբերից մենք մուտք գործեցինք նաև հանրային հեռարձակման դաշտ: Բուն TV-ն դարձել է ***24/7 հանրային հեռարձակող Հայաստանում***, իսկ :Audioboon-ը ամեն օր հեռարձակվում է ***հանրային 2-րդ ռադիոկայանի միջոցով (103.8)***:

«Բուն» հիմնադրամի կողմից վերջերս իրականացված որոշ նախագծերը՝

Դրամաշնորհատու	Ծրագրի անվանում	Ժամկետներ	Բյուջե (ԱՄՆ դոլար)
Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամ	«Արևմտահայ գրականություն»	28/07/2023 – 28/06/2024	40,000
Ժողովրդավարության ազգային հիմնադրամ	«Բուն զրույցներ. Արտաքին քաղաքանաություն», «Դիլեմա», «Թուրքագիտություն», «Իրանագիտություն», «Պատերազմի և խաղաղության տեսություններ» հեռուստաշարքեր	01/02/2023 - 01/02/2024	218,000
Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ	Անկախ մեդիայի զարգացման դրամաշնորհ	01/03/2023 - 01/03/2024	120,000
Prague Civil Society Centre	Ինստիտուցիոնալ դրամաշնորհ	15/11/2022 – 15/11/2023	70,000
ՀՀ ԿԳՄՄՆ	«Եվ լողում է նավը» հեռուստաշարք	28/03/2023 – 10/12/2023	39,600
ՀՀ ԿԳՄՄՆ	«Լինել Քաղաքացի» հեռուստաշարք	20/03/2023 - 21/11/2023	8,250
Բաց Կառավարման Գործընկերություն	«Բուն Զրույցներ» արդարադատության, մեդիայի, հանրային քաղաքականությունների և կրթության շուրջ	15/05/2023 – 15/11/2023	25,000
CIPE	«ԴիզԲիզ» ապատեղեկատվությունը և բիզնեսը	01/11/2023- 01/05/2024	9,700

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Առաջարկվող ծրագրի ընդհանուր նպատակն է ոգեշնչել և խրախուսել երիտասարդներին ակտիվորեն ներգրավվել կամավորական և համայնքային տարբեր նախաձեռնությունների աշխատանքներում:

Ծրագրի խնդիրները.

- Ստեղծել 8 մասից բաղկացած դոկումենտալ ֆիլմաշար, որը կներկայացնի տարբեր կամավորական նախաձեռնություններ և երիտասարդական գործունեության օրինակներ՝ մոտիվացնելով երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային միջոցառումներին և կամավորական ծրագրերին:
- Ապահովել ֆիլմաշարի լայն տարածումը մեդիա տիրույթում:

Ծրագրի նպատակին հասնելու համար կգրանցվեն հետևայլ չափելի արդյունքները.

1. Նկարահանված «Կամավորը» շարք 8 մասից:
2. Հաղորդաշարի հեռարձակում ԲունTV հանրային հեռարձակողի միջոցով, հասանելի Երևանում հանրային մուլտիպլեքսի, իսկ մարզերում՝ կաբելային հեռուստատեսության միջոցով:

3. Հաղորդաշարի տարածում «:Բուն» հիմնադրամի սոցիալական հարթակներով (www.boon.am; Facebook; YouTube; Instagram), որոնց միջոցով յուրաքանչյուր հողորդում հասանելի կլինի 30,000 համացանցի օգտատիրոջ:

Երիտասարդների շրջանում կամավորությունը խթանելով՝ ծրագիրը կնպաստի հասարակության ընդհանուր բարեկեցությանը: Ցուցադրելով կամավորության և երիտասարդական գործունեության դրական արդյունքները, հեռուստանախագիծը նպատակ ունի ձևավորել սոցիալապես պատասխանատու և ներգրավված անհատների նոր սերունդ: «Կամավորը» նախագիծը կարող է տևական ազդեցություն ունենալ հետևյալ ուղղություններով՝

- **Իրազեկվածության բարձրացում.** Երիտասարդների շրջանում կամավորության և համայնքային գործունեության առավելությունների վերաբերյալ տեղեկացվածության և հետաքրքրության բարձրացում:
- **Վարքագծի փոփոխություն և համայնքների հզորացում.** Կամավորական նախաձեռնություններին ակտիվորեն մասնակցող երիտասարդների թվի աճ և ուժեղ համայնքների կառուցում:
- **Դրական սոցիալական փոփոխություն.** Նախագիծը կխրախուսի մշակութային տեղաշարժը դեպի համայնքային ակտիվ մասնակցություն և պատասխանատվություն:

Գործողություններ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն *«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ*
Ծրագիր *«Կամավորը»*
Ժամանակահատված *01.04.2024-30.11.2024*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս							
			1	2	3	4	5	6	7	8
1	Երիտասարդ կամավորների ընտրություն	Բունի ծրագրային թիմ								
2	«Կամավորը» հաղորդաշարի նկարահանումում	Բունի ծրագրային թիմ, Բունի արտադրական թիմ								
3	«Կամավորը» հաղորդաշարի հետ նկարահանման աշխատանքներ ներառյալ ռուսերեն լեզվով թարգմանությունը և ենթագրումը	Բունի ծրագրային թիմ, Բունի արտադրական թիմ								
4	Հաղորդաշարի հանրայնացում և հեռարձակում	Բունի եթերային թողարկման թիմ և ՍՄՄ մասնագետ								

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագիրը երիտասարդներին իրազեկելու և կրթելու նպատակ ունի: Այդ իմաստով ծրագրի հիմնական թիրախային խումբն են՝ 16-25 տարեկան անձինք, որոնք առավել հաճախ են զբաղվում կամավորական գործունեությամբ: Այդուհանդերձ, հաշվի առնելով առաջարկվող հաղորդաշարի ինտերակտիվ-սոցիալական բնույթը, լայն առումով, ծրագիրն ուղղված կլինի հասարակության ավելի լայն շերտերին՝ հանրահռչակելով Հայաստանում տեղի ունեցող երիտասարդական նախաձեռնությունները: Հանրային հեռարձակումը կապահովի հանրության գրեթե բոլոր տարիքային շերտերի ներառումը, իսկ սոցիալական մեդիա գործիքների կիրառմամբ հատուկ կթիրախավորվեն մարզաբնակ երիտասարդները, ինչպես նաև ԱՊՀ երկրները, որոնց բնակիչների համար ֆիլմերը կունենան ռուսերեն ենթագրեր: Ծրագրի շահագրգիռ կողմերն են ՀՀ համայնքները, որոնց զարգացմանն են ուղղված լինում նախաձեռնությունները, ինչպես նաև Հայաստանում գործող ՀԿ դաշտը, որը կտեղեկանա տարբեր համայանքներում ակտիվ երիտասարդների, նախաձեռնող խմբերի և սոցիալական նախագծերի մասին:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի արդյունավետ իրականացումը երաշխավորված է «:Բուն» հիմնադրամի տարիների փորձով, տեխնիկական և մասնագիտական կարողություններով:

Այդուհանդերձ, կարող ենք առանձնացնել որոշ տեխնիկական ռիսկեր.

- Երիտասարդներին ներգրավման դժվարություններ, մասնակիցների հետաքրքրվածության ցածր մակարդակ: Բունը կհամագործակցի երիտասարդական ՀԿ-ների և այլ գործընկերների հետ, ում միջոցով կներկայացվի նախագիծը և առանց որևէ խոչընդոտների հնարավոր կլինի կներգրավել և ընտրել 8 ֆիլմերի հերոսներին:
- Նկարահանման տեխնիկայի չնախատեսված անսարքություն: Բունը կօգտագործի ռեզերվային տեխնիկան:
- Boon.am կայքի վրա հաքերային հարձակում, որը կդժվարեցնի առցանց տիրույթում հաղորդաշարի տարածումը: Մենք հաղորդաշարը կներբեռնենք մի քանի հարթակներում, ինչը հնարավորություն կտա տեխնիկական խնդիրները լուծելուն զուգահեռ ապահովել հաղորդաշարի հասանելիությունը:

Ծրագրի աշխատակազմը

Հ/Հ	Անուն, ազգանուն	Դերը/պատասխանատվության շրջանակը ծրագրում	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1.	**Նանե Մինասյան**	Ծրագրերի տնօրեն, վերահսկում է ծրագրի պատշաճ և ժամանակին կատարումը, պատրաստում է դրամաշնորհային հաշվետվությունները	Ավելի քան 5 տարի
2.	**Արթուր Աթայան**	Ծրագրի համակարգող, համակարգում է ծրագրային աշխատանքները, ներգրավում է մասնակիցներին, ապահովում է պատշաճ հաղորդակցություն	Ավելի քան 5 տարի
3.	**Արման Մկրտրյան**	Ֆինանսական տնօրեն, պատասխանատու է բյուջեի բաշխման, պայմանագրերի, վճարաումների, ֆինանսական և հարկային հաշվետվություններ կազմելու համար:	Ավելի քան 10 տարի

Հանրահռչակում և Ծրագրի տեսանելիության բարձրացմանն ուղղված քայլեր

Ծրագրով պատրաստված դոկումենտալ ֆիլմերը հեռարձակվելու են ԲունTV հանրային հեռարձակող հեռուստաալիքով, տեղադրվելու են https://boon.am/boontv/ կայքում և Բունի սոցիալական մեդիա հարթակներում: Տարածման համար ակտիվորեն կօգտագործվեն Բունի՝ մեծաթիվ հետևորդներ ունեցող սոցիալական հարթակները՝ Facebook (49,000 բաժանորդ), YouTube (27,000 բաժանորդ); Instagram (3,500 բաժանորդ): «:Բուն TV»-ի SMM մասնագետը կապահովի ֆիլմերի լայն տարածումը առցանց տիրույթում, ինչպես նաև նախատեսում ենք գնել թիրախային ֆեյսբուքյան գովազդներ մարզային լսարանի և ԱՊՀ երկրներից երիտասարդների ներգրավվածությունը ապահովելու համար: Ֆիլմերը կցուցադրվեն 2024 թ. սեպտեմբեր ամսից սկսված՝ շաբաթը մեկ: Ծրագրի ավարտից հետո հաղորդումները շարունակելու են ներբեռնված և հասանելի լինել ԲունTV-ի կայքում, ինչը թույլ կտա ժամանակի ընթացքում հասնելու ավելի մեծ լսարանի: Կանխատեսում ենք, որ յուրաքանչյուր հաղորդում հասանելի կլինի ավելի քան 30,000 օգտատիրոջ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ
Ք. Երևան, Բաշինջաղյան 133
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930049723220100, ՀՎՀՀ 02623069
boon@boon.am
Տնօրեն՝
Գ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 4
«25» «03» 2024 թ.
N ԵԴ -05 -2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 5
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-05 - 2024 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծություն՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ
Ք. Երևան, Բաշինջաղյան 133
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930049723220100, ՀՎՀՀ 02623069
boon@boon.am
Տնօրեն՝
Գ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«25» «03» 2024 թ.
N ԵԴ -05-2024 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.